www.urbnews.com

Գեղարքունիքի մարզպետարանի
Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչություն

24.03.2020

Հարցում

Ուրբանիստա մեդիա հարթակը, որը պատմում է Հայաստանի քաղաքների կյանքի մասին՝ շեշտը դնելով քաղաքաշինության վրա, մուլտիմեդիա նյութ է պատրաստում վերջին երկու տասնամյակում մարզային բնակարանաշինության մասին: Նյութում նախատեսվում է նկարագրել մարզային բնակարանաշինության ընդհանուր պատկերը, անդրադառնալ խնդիրներին:

Հոդվածը հավասարակշռված և բազմակողմանի պատրաստելու համար խնդրում ենք տրամադրել որոշակի տվյալներ և հստակեցնել որոշ հարցեր: Մասնավորապես.
1. Ձեր մարզի խոշոր քաղաքներում վերջին 20 տարիների ընթացքում քանի՞ բնակելի շենք է կառուցվել, կամ կառուցման, կամ պլանավորման որ փուլում են: Տվյալները տրամադրել առանձնացված՝ ըստ քաղաքների եւ տարիների:
2. Արդյո՞ք ունեք երիտասարդների կողմից բնակարաններ կառուցելու կամ ստանալու մասին դիմումներ:
3. Մարզում վարձատրության տրված բնակարանների վերաբերյալ կան արդյո՞ք վիճակագրական տվյալներ՝ թե քանի բնակարան է տրված վարձակալության: (Հիշեցնենք, որ զինծառայողների վարձով բնակարանների համար պետությունը պայմանագրեր է կնքում վարձակալների հետ), խնդրում ենք տրամադրել վիճակագրական տվյալներ՝ ըստ քաղաքների:
4.Եթե կան տվյալներ բնակարանաշինական ծրագրերում ընդգրկված կառուցապատողների և շինարարների վերաբերյալ, խնդրում ենք տրամադրել:

Նշված տվյալների՝ ընդունված էլեկտրոնային ֆորմատով (Excel, .csv, և այլն) առկայության դեպքում խնդրում ենք դրանք տրամադրել հոդվածն իրականացնելու համար:

Հոդվածը կհրապարակվի «Ուրբանիստա» մեդիահարթակի www.urbnews.com կայքում և կտարածվի Ուրբանիստայի ֆեյսբուքյան, ինստագրամի և թվիթերի հարթակներով:

Կանխավ շնորհակալ եմ,
Ամալյա Մարգարյան
լրագրող

www.urbnews.com